ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ	ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
2022 թվականի ապրիլի 26 N 53-Լ	2022 թվականի ապրիլի 28 N 461-Լ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 256-Լ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի N 65-Լ ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը, Կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 1584-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2.2-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. Հաստատել Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի և Պետական եկամուտների կոմիտեի միջև փոխադարձ տեղեկությունների ներկայացման ձևը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2020 թվականի մարտի 19-ի N 256-Լ և Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահի 2020 թվականի մարտի 20-ի N 65-Լ «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի և Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի միջև փոխադարձ տեղեկությունների ներկայացման ձևը սահմանելու վերաբերյալ» համատեղ հրամանը:

3. Սույն համատեղ հրամանն ուժի մեջ է մտնում 2022 թվականի մայիսի 1-ից:

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի նախագահ
Գ. Գևորգյան

2022 թ. ապրիլի 26
Երևան

Պետական եկամուտների կոմիտեի նախագահ
Ռ. Բադասյան

2022 թ. ապրիլի
Երևան

ՀԱՎԵԼՎԱԾ
Մրցակցության պաշտպանության
հանձնաժողովի նախագահի
և Պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2022 թվականի ապրիլի 26
թիվ 53Լ
և
Մրցակցության պաշտպանության
հանձնաժողովի նախագահի
և Պետական եկամուտների կոմիտեի
նախագահի 2022 թվականի ապրիլի 28
թիվ 461Լ համատեղ հրամանի

ՁԵՎ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

ԳԼՈՒԽ 1
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրամանով կարգավորվում են Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) և Պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) միջև փոխադարձ տեղեկությունների ներկայացման ձևի հետ կապված հարաբերությունները:

ԳԼՈՒԽ 2
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ

2. Կոմիտեն հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունը Հանձնաժողովին ներկայացնում է հետևյալ ձևերով.

1) Կառավարության 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1093-Ն որոշմամբ սահմանված Կառավարության փոխգործելիության հարթակով.

2) Կոմիտեի տեղեկատվական համակարգերի միջերեսից Հանձնաժողովին ուղիղ հասանելիության ապահովմամբ.

3) գրավոր ձևով, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի միջոցով Հանձնաժողովի կողմից օրենսդրությամբ սահմանված դիմումի ներկայացման արդյունքում:

ԳԼՈՒԽ 3

ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ

3. Հանձնաժողովը հարկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հիման վրա արձանագրված խախտումների վերաբերյալ տեղեկությունը Կոմիտեին ներկայացնում է գրավոր ձևով, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության «Mulberry» համակարգի միջոցով: